

## **«Սերվիս» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր**

### ***Ընդհանուր տեղեկություն***

«Սերվիս» մասնագիտության շրջանակներում իրականացվող բակալավրիատի կրթական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից աշխարհում և աշխատաշուկայում նոր աշխարհայացքով, հմտություններով և կարողություններով այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնք կունենան բարձր պահանջարկ և ծառայությունների շուկայում բազմակողմանի մասնագիտական որակ, բարձրակարգ հատկանիշներ:

Բակալավրիատի ծրագրի ավարտին շրջանավարտը տիրապետում է ինչպես բիզնես ոլորտի, այնպես էլ պետական կառավարչական արդի պահանջներին:

Բակալավրիատի ծրագիրը մշակվել է ոլորտի լավագույն և ճանաչված մասնագետների կողմից:

### ***Մասնագիտության նկարագիրը***

«Սերվիս» կրթական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են ծառայությունների ոլորտի՝ զբոսաշրջության, հանրային ծառայությունների, էներգետիկայի, պետական և համայնքային այլ ծառայությունների ոլորտների բիզնես առանձնահատկություններին, նաև՝ այդ բիզնեսների ոլորտների կառավարման և կազմակերպման ժամանակակից պահանջներին, միջազգային փորձին: Ընդ որում, պետք է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության Համախառն Ներքին Արդյունքում ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռն անցել է 40%-ը: Դա նշանակում է, որ նաև համապատասխան որակյալ մասնագետների պահանջարկն այս ոլորտում բավականին բարձր է: Ո՞վ չի ուզում ստանալ բարձրակարգ սերվիս՝ ծառայություններ:

Մասնագիտության ձեռքբերման և ուսումնառության ընթացքում Դուք ծանոթանալու եք ժամանակակից բիզնեսի, մարքեթինգի, ֆինանսական կառավարման, հաշվապահության և այլ ժամանակակից դիսցիպլինների հետ:

Կարևոր է նաև այն, որ ուսումնառության ընթացքում Դուք մշտապես հանդիպելու եք հանրապետության լավագույն և Ձեզ ծանոթ հայտնի պետական և տնտեսական գործիչների հետ:

### ***Աշխատանքի հնարավորությունները***

Կրթական ծրագիրը պատրաստվել է՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, սերվիսի կազմակերպման և կառավարման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան, և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը հայկական տնտեսության մեջ ամեն տարի աճում է: Տվյալ ծրագրի շրջանակում ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ նախատեսվում է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում:

Շրջանավարտները ուսումնառությունից հետո կարող են աշխատել ինչպես սվյալ ոլորտում, այնպես էլ՝ ժամանակակից տնտեսության այլ ոլորտներում, քանի որ տիրապետելու են բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից մեթոդներին, նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին:

Այսօր հայտնի է, թե մեր հանրապետությունում որքան կարևորություն ունեն կառավարիչները, և առանց տնտեսության այս ճյուղերի արդյունավետ կենսագործունեության՝ անհնար է պատկերացնել մեր հանրապետության հանրային կյանքի բնականոն ընթացքը: Իսկ դա նշանակում է, որ վերոնշյալ ոլորտի ընկերություններում մշտապես լավագույն մասնագետների նկատմամբ լինելու է բարձր պահանջարկ՝ համապատասխան բարձր աշխատավարձով:

Կրթական ծրագիրը ղեկավարելու է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մելքումյանը: